

է» (էջ 201): «Պատերազմի տարիներին, — գրում է Գ. Ե. Երեմենկո, — երիտթուրքերը փորձեցին իրականացնել երկրի ներսում իրենց պանթյուրքիստական և պանիսլամիստական նպատակները՝ ոչնչացնելով ոչ մուսուլման ազգային փոքրամասնություններին: Մասամբ դա նրանց հաջողվեց: Օգտվելով պատերազմական վիճակից, երիտթուրքերը գերմանական գլխավոր շտաբի խորհրդով սկսեցին Արևելյան Անատոլիայից (իմա՝ Արևմտյան Հայաստանից — Մ. Զ.) հայ բնակչության տեղահանումը: Զոհվեցին մեկ և կես միլիոն հայեր», — գրում է Գ. Ե. Երեմենկո (էջ 204—205):

Թուրքական բուրժուական ազգը ձևավորվեց քեմալականների ժամանակ: Միայն քեմալականների ժամանակ է, որ «ազգայնականության» սկզբունքը, թուրքական ազգին պատկանելու գիտակցությունը եկավ թուրքերի մոտ փոխարինելու իսլամիզմի և սամանիզմի սկզբունքներին» (էջ 207): «Ազգային փոքրամասնությունների նկատմամբ, — գրում է Գ. Ե. Երեմենկո, — [քեմալական] կառավարող շրջանները հենց սկզբից վարեցին թուրքացման քաղաքականություն: 1924 թ. սահմանադրության 88-րդ հոդվածը

Թուրքիայի սահմաններում ապրող բոլոր քաղաքացիներին թուրքեր էր համարում: 1961 թ. սահմանադրության 84-րդ հոդվածը դարձյալ բոլոր քաղաքացիներին թուրքեր է հանձնում: Այստեղից էլ հեղինակը եզրակացնում է. «Ընդհանրապես, Թուրքիայի արդի ազգային տեղաշարժերի մեջ տիրապետող միտումը թուրքերի կողմից ազգային փոքրամասնությունների ձուլումն է թուրք ազգի մեջ» (էջ 217):

Անշուշտ, դժվար է մի գրախոսականի սահմաններում քննել այն բոլոր հարցերը, որոնք արծարծված են Գ. Ե. Երեմենկոյի գրքում: Առավել ուշադրություն դարձրեցինք աշխատության գլխավոր ու էական հարցերին: Շոշափված նյութից ակնհայտ է, որ դործ ունենք գիտական խոշոր նշանակություն ունեցող մի աշխատության հետ: Ընդհանուր առմամբ գիրքը գրված է գիտական ու մեթոդոլոգիական ճիշտ ու առողջ գիրքերից և ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

Ցանկալի կլիներ այդ գիրքն ունենալ նաև հայերեն թարգմանությամբ:

Մ. ԶՈՒԼԱՅԱՆ

Г. Л. АРШ, Этеристское движение в России, М., 1970, 372 стр., цена 1 р. 72 коп.

Բալկաններին, մանավանդ Հունաստանի նոր պատմության մի շարք հանգուցային հարցերի գիտական լուսաբանության ուղղությամբ վերջին տարիներին ղգալի աշխատանք է կատարել սովետական պատմաբան Գրիգորի Լվովիչ Արշը: Նրա նոր ծավալուն ուսումնասիրությունը, որ լույս տեսավ Հունաստանի հեղափոխության 150-ամյակի նախօրյակին, նվիրված է Օդեսայում ստեղծված հունական ընդհատակյա «Ֆիլիկի հետերիա» կաղմակերպության Ռուսաստանում ծավալած յոթնամյա (1814—1821) գործունեությանը:

Դ. Լ. Արշը հանգամանորեն ուսումնասիրել է հրապարակի վրա գտնվող փաստական հարուստ նյութը, օգտագործել է Բալկաններում և Ռուսաստանի հարավային մասերում ծավալված ազատագրական-հեղափոխական շարժումներին նվիրված սովետական պատմաբանների ուսում-

նասիրությունները, հրապարակ է հանել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրել սովետական արխիվներում պահվող չափազանց արժեքավոր փաստաթղթերը «Ֆիլիկի հետերիա» և նրա գործիչների մասին: Դրա շնորհիվ նա ստեղծել է հունական հեղափոխական կաղմակերպությանը և առհասարակ Ռուսաստանում հետերական շարժմանը նվիրված լիամփոփ մի աշխատություն, որ կարևոր ներդրում է սովետական պատմագրության մեջ օսմանյան լուծող Հունաստանում տապալելու պատմությունը գիտականորեն լուսաբանելու տեսակետից:

Ամենից առաջ Դ. Լ. Արշը մանրամասն անդրադառնում է հետերական շարժման նախապատմությանը, լուսաբանում տնտեսական և սոցիալ-քաղաքական այն իրադրությունը, որ գոյություն ուներ Հունաստանում օսմանյան լծի տիրապետության տվյալ ժամանակաշրջանում՝ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին: Թուրքական դաժան հարստահարության պայմաններում թե՛ Հունաստանում և թե՛ հունական գաղթավայրերում, մասնավորապես Կ. Պոլսում, կազմավորվել էր հունական առևտրական բուրժուազիան, որը լայն կապերի մեջ էր մտել հարևան երկրների. մասնավորապես Ռուսաստանի հետ: Հույն ժողովուրդը, դիմակայելով սուլթանական ծանր ու-

1 Դ. Լ. Արշի գրչին են պատկանում գիտական հանդեսներում և տարբեր ժողովածուներում հրատարակված մի շարք ուսումնասիրություններ, ինչպես նաև «Албания и Эпир в конце XVIII — начале XIX в.», М., 1963, «Тайное общество „Филики этерия“, М., 1965 և գրախոսվող աշխատությունները:

ծիմին, շարունակում էր պայքարն իր անկախությունը վերահաստատելու, օսմանյան լուծը թուփելու համար՝ գերադանցապես իր հույսերը կապելով խոշոր տերություններից և մանավանդ Ռուսաստանից սպասվող օգնության հետ։ Այդ պայքարն առավել ակտիվ բնույթ էր ստացել XVIII դ. երկրորդ կեսին։ Անմատչելի լեռներում և մի շարք կղզիներում ամրացած հույները, հաճախ, թուրքական լծի հաստատման առաջին օրերից ցած չդնելով ղեկը, շարունակել են զինված պայքարն օտար զավթիչների դեմ, մի շարք վայրերում՝ Մանիում, Սուլիում, Սֆակյայում և այլուր, պահպանել են իրենց անկախությունը կամ կիսանկախ վիճակը։

Ռուս-թուրքական պատերազմները, որոնք գրեթե միշտ արձագանք էին գտնում գյուղացիական-պարտիզանական պայքարի ելած հունական շրջաններում, XVIII դ. վերջին հանգեցրին Թուրքիայի ազդեցության զգալի թուլացմանը թե՛ բուն Հունաստանում, և թե՛ նրան հարող կղզիներում։

Հունաստանում տիրող սոցիալ-քաղաքական պայմանների հետևանքով, ինչպես իր թեմային անցնելուց առաջ կոնկրետ ու չամոզիչ փաստերով ցույց է տալիս մենագրության հեղինակը, հույն ժողովրդի դեմոկրատական ազատատենչ շերտերը սկսած XVIII դ. երկրորդ կեսից, ստիպված են եղել մասսայաբար թողնել իրենց բնօրրանը և հաստատվել զանազան երկրներում, մասնավորապես Ռուսաստանի հարավում՝ ստանալով մեծ արտոնություններ։ Ռուսաստանի օգնությամբ ու հովանավորությամբ ստեղծված նոր ժամանակների հունական առաջին պետության՝ Յոթ միացյալ կղզիների հանրապետության (1800—1807) վերացումից հետո մեծ թվով հույներ ոչ միայն բնակություն են հաստատել Ռուսաստանում, այլև ծառայության են անցել ռուսական բանակում, պետական օրգաններում և դիվանագիտական մարմիններում։ Հավատարմությամբ ծառայելով ռուսական կայսրությանը և հասնելով պետական բարձր պաշտոնների (Բ. Կապոդիստրիան նշանակվեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր, իսկ քսանհինգամյա Ա. Իսլսիլանտին ցարական բանակի ամենից երիտասարդ գեներալներից մեկն էր), նրանք շարունակում էին մնալ հույն հայրենասերներ, ամեն կերպ աջակցում էին իրենց հայրենակիցներին և երբեք չէին դադարում ուղիներ որոնել Հունաստանը թուրքական լծից ազատագրելու համար։

Այդպիսի գործիչներից հեղինակը մասնավորապես անդրադառնում է խիզախ ծովային Լամբրոս Կացոնիսին (մոտ. 1752—1805), որի զխավորությամբ թուրքերի դեմ մղված հերո-

սական մարտերը մինչև այժմ անհրաժեշտ լուսաբանում չեն գտել մեր պատմագրության մեջ։ Հարուստ փաստական նյութի և հունական աղբյուրների հիման վրա Գ. Լ. Արշը համառոտակի ուրվագծում է Կացոնիսի անձնվեր գործողությունները՝ ռուսական զինվորական հրամանատարության առաջադրանքով։ Փոքրաթիվ ռազմանավերով նա կարողացել է զգալի հարվածներ հասցնել թուրքական նավատորմին Միջերկրականում և գերիշխանություն հաստատել էգեյան ծովում։ Խիզախ ծովայինի շուրջն էին համախմբվել հայրենասիրական մեծ ուժեր, և նա հույս ուներ, որ իր փայլուն հաղթանակներով կհասնի հույների իրավունքների ճանաչմանը։ Հաջող մարտեր մղելով նախ թուրքական, ապա և թուրք-ֆրանսիական նավատորմների դեմ, Կացոնիսը, սակայն, 1792 թ. հունիսին ստիպված եղավ դադարեցնել պայքարը։ Բայց նրա զխավորությամբ ծավալված շարժումը մեծապես խթանել է հույների ազգային գիտակցության արթնացմանն ու ձևավորմանը։

Հունական հայրենասիրության արմատները, ինչպես համոզիչ կերպով ցույց է տալիս հեղինակը, գալիս էին բուն հույն ժողովրդի ընդերքից, նրա ազատատենչ ոգուց։ Դեռ XVIII դ. վերջին հույն բանաստեղծ Ռիգաս Վելեստինիսը (1757—1798) ստեղծել է գաղտնի կազմակերպություն, մշակել Բալկաններում թուրքական լուծը տապալելու ծրագիր. կազմել արմատական սկզբունքների վրա հենվող իր սամանագրությունը և բոցաշունչ մարտակոչով դիմել օսմանյան լծի տակ գտնվող բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին և վրացիներին²։ Ուրվագծելով Ռիգասի գործունեությունը, Գ. Լ. Արշը հանգում է այն եզրակացության, որ նա է առաջադրել բալկանյան ժողովուրդների եղբայրության և համագործակցության գաղափարը, որով խորապես առաջադիմական դեր է կատարել Բալկաններում հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում (էջ 106)։ Ռիգասի գաղափարներն ու գործունեությունը պայքարի են հանել տասնյակ ու հարյուրավոր հայրենասերների։ Հույն հեղափոխական-դեմոկրատի գործը շարունակել և թուրքական լուծը սեփական ուժերով ու զինված պայքարի ճանապարհով տապալելու նրա կոչը որդեգրել են հույն հայրենասերները։

Բացի Ռիգասից, որի գործունեությունն, ի դեպ, մեկնում է մեր հանելու պատիվը պատկա-

² Ռիգասի, նրա ծրագրի, մարտակոչի և հայերի հետ նրանց ունեցած առնչության մասին տե՛ս մեր հոդվածը ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր» (հաս. գիտ.), 1971, № 8, էջ 39—57։

նում է հենց Գ. Լ. Արշին՝, գրախոսվող մենագրության մեջ պատշաճ տեղ է հատկացված նաև հույն մի այլ գործչի՝ Ադամանտիս Կորաիսին (1748—1833)։ Նա, թեև Ռիգասի ժամանակակից և դարձյալ մեծ հայրենասեր, չէր հավատում ժողովրդի ուժերին, մերժում էր օսմանյան լուծը թոթափելու հեղափոխական ուղին, գտնում էր, որ երկրի ազատագրության միակ միջոցը լուսավորության տարածումն է, թուրքերին գիտությամբ հաղթելը։ Այս գաղափարները լայն տարածում ունեին բուն Հունաստանում ապրող բուրժուական վերնախավի շրջանում։

Սակայն հունական գաղթավայրերի առաջադեմ երիտասարդությունը, որ սերտ կապեր էր պահպանում բուն հայրենիքում գտնվող հույն ժողովրդի հետ, գնաց Ռիգասի մատնանշած ուղիով։ Դա առաջին հերթին վերաբերում է հունական այն երիտասարդությանը, որ գործում էր Ռուսաստանի հարավում բարգավաճող հունական գաղութներում՝ Նեփոսում, Կերչի շրջանում, Տագանրոգում, Օդեսայում, Իզմաիլում, Մարիուպոլում, Նիկոլաևում և այլուր։

«Հույները Ռուսաստանում» գլխում Գ. Լ. Արշը շարադրել է հունական գաղթավայրերի և համայնքների պատմությունը, ցույց է տվել, որ առաջադեմ հույն երիտասարդությունը կապված է եղել ռուսական առաջադեմ խավերի հետ և կրել է դեկաբրիստական շարժման գաղափարախոսության ազդեցությունը, անդրադարձել է մի շարք հույն առևտրականների հայրենասիրական գործունեությանը, որը գերազանցապես արտահայտվել է բուն Հունաստանում լուսավորության տարածմանը նպաստելու մեջ։ Այդ միջավայրում աճած հույն երիտասարդության շրջանում է, որ նորից վերակենդանանում են Հունաստանի ազատագրության Ռիգասի փայփայած հույսերը, հասունանում է հեղափոխական պայքար ծավա-

լելու գաղափարախոսությունը, եվ, ինչպես ընդգծում է մենագրության հեղինակը, բնավ պատահական չէ, որ հենց Ռուսաստանն է դառնում «Ֆիլիկի հետերիայի» ծննդավայրը, նրա երկարատև ու բեղմնավոր գործունեության օրրանը, գործունեություն, որն ի տարբերություն նույնատիպ այլ կաղմակերպությունների ծավալած աշխատանքի, վճռական դեր կատարեց Հունաստանի ազատագրության և հունական հեղափոխության հաղթանակի գործում։

Գ. Լ. Արշի աշխատության շորս հիմնական հատվածները՝ 4—8-րդ գլուխները (էջ 167—296), նվիրված են «Ֆիլիկի հետերիայի» գործունեությանը Ռուսաստանում։ 1814 թ. աշնանից, երբ Օդեսայում հիմնադրվեց հույն հեղափոխականների գաղտնի կաղմակերպությունը, մինչև 1821 թ. գարունը, երբ սկսվեց հունական հեղափոխությունը շուրջ յոթ տարի «Ֆիլիկի հետերիան» հիմնադիր-ղեկավարների մի փոքրիկ կորիզից վեր է ածվել մասսայական կաղմակերպության, իր գործունեությունը ծավալել է հունա-ռուսական բոլոր գաղթավայրերում, ապա և Թուրքիայում ու բուն Հունաստանում։ Հետերական շարժման մեջ են ներգրավվել նաև մի շարք այլ երկրներում ապաստան գտած հույները։ Նա կարողացել է ազգային ցիրուցան ուժերը և միջոցները նպատակամղել միևնույն խնդրին՝ Հունաստանի ազատագրությանը թուրքական լծից։

Ոչ միայն իր քաղաքական նպատակներով, այլև գործունեության ձևերով ու կաղմակերպական հիմունքներով «Ֆիլիկի հետերիան» եղել է ազգային-ազատագրական լիովին հասուն կաղմակերպություն։ Նրա մեջ նոր անդամների ընդունելությունը (ավելի ճիշտ հավաքագրումը) կատարվում էր անհատական կարգով, անդամներից որևէ մեկի երաշխավորությամբ։

Հետերականներն ունեին իրենց խորհրդանիշը, ծածկագիր-այբուրենը, ծածկագիր-բառաբանը՝ թվահամարներով արտահայտված աշխարհագրական անունների հավելվածով։ Հետագայում կազմվեց նաև «Զինվորական կանոնագիրը» հետերականների համար։ Կաղմակերպության ամբողջ գործունեությունը հիմնված էր խստագույն գաղտնապահության սկզբունքի վրա։ Դրա շնորհիվ «Ֆիլիկի հետերիայի» գոյությունը երկար ժամանակ մնացել է գաղտնի։ Ցարական ռուսականությանը և ամեն տեղ թափանցող նրա գործակալներին ոչինչ հայտնի չէր հունական հեղափոխական գաղտնի կաղմակերպության մասին, թեև հույն պատմաբանները դրեթև միաձայն այն կարծիքին են, որ Ալեքսանդր I-ը գիտեր կաղմակերպության մասին, որ նա հովանավորում էր հետերականներին։ Գ. Լ. Արշը ռուսական արխիվներում ի հայտ բերած նյութերի հի-

3 См. Г. Л. Арш, К вопросу об идейном воздействии Великой французской революции на балканские народы (Неизвестный текст конституции и «Военного гимна» Ригаса Велестинлиса), «Французский ежегодник», 1963, М., 1964, էջ 320—344; նույնի՝ Тайное общество «Филики этерия», М., 1965, էջ 20—34, նույնի՝ Великая французская революция и Греция (Политическая программа Ригаса Велестинлиса), «Европа в новое и новейшее время», М., 1966, էջ 142—161; նույնի՝ Ригас Велестинлис — греческий революционер-демократ. борец против османского ига (Его практическая революционная деятельность), «Балканский исторический сборник», вып. 1, Кишинев, 1968, էջ 9—15.

ման վրա նոր լույս է սփռում այդ կարևոր հարցի վրա:

Աշխատության «Գալատիսի գործը» գլխում հեղինակը մանրամասն քննում է «Ֆիլիկի հետերիայի», վերնախավի այդ ներկայացուցչի Պետերբուրգ մեկնելու հանգամանքները, կապողիստրիայի հետ նրա ունեցած հանգիստման մանրամասնությունները, նրան կազմակերպության ղեկավար դառնալու մասին արված առաջարկի, ինչպես և ցարի և «Ֆիլիկի հետերիայի» կապերը պարզելու դրդապատճառները: Ի տարբերություն մինչև այժմ հայտնված կարծիքների, Գ. Լ. Արշը ցույց է տալիս, որ Գալատիսի Պետերբուրգ այցելելուց առաջ ցարական իշխանություններին, իրեն ցարին և կապողիստրիային ոչինչ հայտնի չէր գաղտնի կազմակերպության գոյության մասին, որ Գալատիսն ըստ էության ապաքողարկել է «Ֆիլիկի հետերիան»: Միայն Ի. կապողիստրիայի հմտության շնորհիվ հաջողվեց կանխել գաղտնի կազմակերպության բացահայտումը: Ավելին. լինելով հունական ջերմ հայրենասեր՝ կապողիստրիան, պալատական շրջաններում ունեցած իր ազդեցության շնորհիվ, կարողացավ գործին այնպիսի ընթացք տալ, որ ձերբակալված Գալատիսը շուտով աղատ արձակվեց, իսկ գաղտնի կազմակերպությունը մոռացվեց:

1817—1819 թթ. «Ֆիլիկի հետերիայի» գործունեության առավել բուռն ժամանակաշրջանն էր: Հետերականների հիմնադիրներից մեկը՝ Ն. Սկուֆասը, փոխադրվելով Կ. Պոլիս, կարողացավ օսմանյան տերության մայրաքաղաքը դարձնել գաղտնի կազմակերպության կենտրոնատեղին և նրա մեջ ներգրավել հույն հայրենասերների: Միաժամանակ «Ֆիլիկի հետերիայի» Օդեսայի կենտրոնին հաջողվեց մեծ թվով հույներ հավաքագրել Իզմաիլում, կապ հաստատել բուլղար հայրենասերների. ապա և բալկանյան սլավոնների ազատագրական ուժերի հետ: Հետերական շարժման մեջ ներգրավվեցին Մոսկվայում, Քիշինևում, Կիևում հաստատված հույն հայրենասերներ: Հետերական շարժումը լայն ծավալ ստացավ հատկապես Օդեսայում, որտեղ նրա գործունեությունը և դավանած գաղափարների տարածմանը նպաստում էին հունական ուսումնարանը և նորաստեղծ թատրոնը:

Հայնորեն ճյուղավորված ընդհատակյա կազմակերպությունը շարունակում էր ղեկավարել իր կազմը ընդարձակած կոմիտեն, որի մասին շարքային անդամները սոսկ մշուշապատ պատկերացում ունեին, նույնիսկ ենթադրում էին, թե կոմիտեի «Ծայրագույնը» կապողիստրիան է: Դրան նպաստում էր նաև այն, որ ռուս մի շարք դիվանագետներ, որոնք զբաղեցնում էին ռուսական դեսպանների և փոխ-դեսպանների պաշտոնները օսմանյան կայսրությունում, ներգրավվե-

ցին «Ֆիլիկի հետերիայի» մեջ: 1818 թ. կոմիտեի առջև ծառացավ կազմակերպության ղեկավարի անհետաձգելի հարցը: Կոլեկտիվ թրոշում կայացվեց պաշտոնապես դիմել կապողիստրիային: Դրանում իր արտահայտությունը գտավ հույն ժողովրդի մեջ դարեր ի վեր իշխող այն հավատը, որ թուրքական լծից իր ազատագրումը կիրագործվի Ռուսաստանի օգնությամբ: Կոմիտեի անդամների համոզմամբ կապողիստրիան ազգային-ազատագրական կազմակերպությունը գլխավորելու ընդունակ ս.մենից հարմար թեկնածուն էր:

Գ. Լ. Արշն արդեն հայտնի հունական աղբյուրների և նորահայտ արխիվային նյութերի հիման վրա լուսաբանում է ժամանակաշրջանի իրադրությունը, որի համեմատ էլ լուրջ փոփոխություն էր կատարվում Ռուսաստանի՝ դեպի Թուրքիան ունեցած վերաբերմունքի մեջ: «Թուրքերի հետ խաղաղ ապրելու» ցարի արտաքին քաղաքական կուրսը բացառում էր նաև կապողիստրիայի ներգրավումը հետերական շարժման մեջ և, ինչպես պետք էր սպասել, նա մերժեց «Ֆիլիկի հետերիայի» ղեկավարությունը ստանձնելու առաջարկը: Հեղինակը ցույց է տալիս այդ մերժման հանգամանքները, ինչպես նաև սպառնիչ պատասխան տալիս այն հարցին, թե ինչ գործոններ նպաստեցին, որ մի այլ հույն հայրենասեր, ռուսական բանակի գեներալ Ա. Իպսիլանտին առանց տատանվելու ստանձնեց «Ֆիլիկի հետերիայի» միանձնյա ղեկավարությունը:

Ինչպես աշխատության այս գլխում (էջ 223—244), այնպես էլ մյուս գլուխներում հեղինակը մանրամասն անդրադարձել է Իպսիլանտի գործունեությանը և միաժամանակ ցույց տվել, որ իր հայրենիքը զենքի ուժով թուրքական լծից ազատագրելու ոգով դաստիարակված, հունական ծագում ունեցող այդ գեներալը հոգեպես նախապատրաստված էր ամեն ինչ՝ և՛ իր դիրքը, և՛ իր կարիերան, և՛ իր հարստությունը, և՛ իր կյանքը զոհելու հայրենիքի ազատագրության գործին: Դեռ մանկուց նա տոգորվել էր Ռիդասի գաղափարներով, հափշտակվել հեղափոխական-դեմոկրատ գործչի «Ռազմական հիմնի» բոցաշունչ տողերով: Ռուսաստանում նա հաղորդակից էր եղել դեկաբրիստական շարժումներին և մերձավոր կապերի մեջ էր հունական հեղափոխական շարժման մի շարք ականավոր գործիչների հետ: Դրա համար էլ նրան օտար չէին առաջադիմական գաղափարները: Առհասարակ բոլոր Իպսիլանտի եղբայրներն էլ (Գեորգի, Նիկոլայ), ցարական բանակում ծառայելով հանդերձ, հենց որ իմացան «Ֆիլիկի հետերիայի» մասին, անմիջապես ներգրավվեցին նրա մեջ և ակտիվ ղեկավար գործունեություն ծավալեցին:

«Կոնստ գեներալը», ինչպես գրել է Ա. Ս. Պուշկինը Ա. Իսսիլանտի մասին, որ Գրեդ-դենի մոտ կորցրել էր աջ թևը, 1820 թ. ապրիլից սկսած Լոանդուն գործունեություն է ծավալել իրեն «Ֆիլիկի հետերիայի» ղեկավար։ Նա անմիջապես նամակներով դիմել է հայտնի հույներին, պարտիզանական շարժման կապիտաններին, ընդհատակյա կազմակերպությունների ղեկավարներին՝ կոչ անելով բոլորին, որ «հույներն իրենց պատմության այս ներկա պատասխանատու պահին պետք է արժանի գտնվեն իրենց նախնիներին» (էջ 247)։ Հենց միայն այն հանգամանքը, որ ռուսական բանակի գեներալ-մայոր Իսսիլանտին ստանձնել է «Ֆիլիկի հետերիայի» գերագույն ղեկավարությունը, հսկայական նշանակություն ունեցավ գաղտնի կազմակերպությունների գործունեության համար։ Ամենուր հղած իր նամակներով ու գրություններով Ա. Իսսիլանտին ոգեշնչում, գործունեության էր մղում հույն հայրենասերներին, անարգանքի սյունին էր գամում իր ժլատ հայրենակիցներին, նրանց, ովքեր զորքերի պես թավալում են ցեխում։ Նրա նամակները մոզական ազդեցություն էին թողնում ոչ միայն շարքային հույների, այլև հույն ազգային հերոսների (օրինակ Թեոդորոս Կոլոկոտրոնիսի) վրա, նրանց ներշնչում էին գործի համար ամեն ինչ զոհարելու պատրաստակամություն։ «Մշտապես նկատի ունեցեք,— գրել է Ա. Իսսիլանտին հույներին ուղղված իր նամակներից մեկում,— որ օտարերկրացիները օտարերկրացուն չի օգնում առանց իր համար չսկայական շահի։ Այն արյան համար, որ օտարերկրացիները կցանկանան թափել մեզ համար, մենք ստիպված կլինենք շատ թանկ վճարել» (էջ 271)։

Լինելով հետևական շարժման կարևոր կենտրոններում, մասնավորապես Օդեսայում և Իզմաիլում, Ա. Իսսիլանտին ոչ միայն խորամուխ եղավ շարժման մեջ, այլև պարզեցրեց կազմակերպության կառուցվածքը, մեծապես խթանեց նոր անդամների հավաքագրմանը և դրամական միջոցներ ժողովելուն։ 1820 թ. հոկտեմբերի կեսին Իզմաիլում նա հրավիրեց ու անցկացրեց հետևական շարժման ընդլայնված խորհրդակցություն։ Այդտեղ քննարկվեց ու հաստատվեց ապստամբության զխալուր սլանը, որի հիմքում դրված էին հեղափոխական-դեմոկրատ (Իդասի դադափարները) Այդ սլանը ապստամբություն սկսելու ժամկետ նախատեսեց 1821 թ. փետրվարի 21-ը (մարտի 5)։ Մինչ այդ Ա. Իսսիլանտին կապեր էր հաստատել սերբական և բուլղարական ազգային-ազատագրական ուժերի հետ, կոնկրետ առաջադրանքներ էր տվել հետևականներից բաղկացած իր բանակի առան-

ձին զորամասերին, հիմնել էր ընդհատակյա տպարան, որտեղ մասնավորապես տպագրեց «Ազգային փոխառությունը» և այլն։

Ա. Իսսիլանտին իր երկու եղբայրների՝ Նիկոլայի ու Գևորգիի և թիկնապահի հետ անցնելով Մոլդավիա, 200 զինված հետևականների գլուխն անցած հաջորդ օրը մտավ Մոլդավիայի մայրաքաղաքը՝ Մյուս օրը «Մարտի ելնել հանուն հավատքի ու հայրենիքի» տպագիր կոչով նա դիմեց հույն ժողովրդին։ Այդ մարտակոչը լայն արձագանք գտավ։ Հետևականները և մյուս հույն հայրենասերները բոլոր կողմերից շտապեցին միանալ Իսսիլանտինի Շուտով ապստամբություն բարձրացավ բուն Հունաստանում։ Հետևականները, ոտքի հանելով հույն ժողովրդին, իրենք միախառնվեցին ապստամբների հոծ զանգվածներին և այդ պահից սկսած «Ֆիլիկի հետերիան» փաստորեն դադարեց գոյություն ունենալ։ Նրա ղեկավարներն, արդեն որպես ապստամբական ուժերի հրամանատարներ, կանգնեցին ազգային-ազատագրական շարժման գլուխը։ Նրանցից շատերը թուրքական զավթիչների դեմ մղված պատերազմում (1821—1829) վաստակեցին ազգային հերոսի դասին, մեծապես նպաստեցին Հունաստանի ազատագրությանը։ «Ֆիլիկի հետերիայի» հաղարավոր անդամները պետք չի չղրեցին մինչև որ իրենց հայրենիքն անկախություն չնվաճեց։

Պատմաբանը քաջ առ քաջ շարադրելով հունական հեղափոխական ընդհատակյա կազմակերպության գործունեությունը, միաժամանակ վեր է հանել շարժման ստվերոտ կողմերը, ցույց տվել հետևականների տարաձայնությունները, ունեոր առանձին հույների մորթապաշտությունը, որոշ ղեկավարների սխալները։

Գ. Լ. Արչի աշխատությունը գրված է մարքսիստ-պատմաբանի հմտությամբ, հրապարակի վրա եղած և արխիվային փաստաթղթերի լիամիտի օգտագործմամբ։ «Հետևական շարժումը Ռուսաստանում» մենագրությունը լրացնում է հայրենական պատմագրության մի էական բացը, միաժամանակ լույս սփռելով օսմանյան լծի տակ գտնված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների առանձին հարցերի վրա, օգնում է թուրքական զավթիչների դեմ ճնշված ժողովուրդների մղած համատեղ պայքարի մի շարք գրագետների լուսաբանմանը։

Բժախնդիր պատմաբանը կարող է թերություններ նշել Գ. Լ. Արչի գրքում։ Նա, անշուշտ, կնկատի, որ Լիդասի գործունեության ամբողջական շարադրանքը տալու, նրա դադափարախոսության ձևավորման արձատները չղրիտ բացահայտելու համար հեղինակը դեռ խոր հետազոտություն պետք է կատարի։ Կարիք

կար աշխատությունը լրացնել մի հատվածով ևս, որտեղ ցույց տրվեր բուն Հունաստանում հետեւողական շարժման ծավալման համար նախապատրաստված պարարտ հողը: Թերեւս հարկ էր մի առանձին գլուխ հատկացնել հունական հեղափոխության արձագանքներին և նրա թողած ազդեցությանը մյուս ժողովուրդների, մանավանդ օսմանյան լծի տակ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի վրա: Պետք է նշել նաև որոշ հրատարակություններ անտեսելու փաստը (օրինակ, գերմանացի պատմաբան Կառլ Մենդելսոն-Բարթոլդիի «Հունաստանի պատմության» բազմահատոր աշխատությունը, որ իր արժեքը պահպանում է նաև մեր օրերում, թեև հրատարակվել է գրեթե մեկ դար առաջ):

Բայց մեզ այստեղ հետաքրքրում է մասնավորապես մի հարց. փոխադարձ ի՞նչ առնչություններ են ունեցել հետեւողականները և իրենց ժողովրդի ազատագրության համար պայքարող հայ գործիչները, ի՞նչ արձագանք է գտել հունական հեղափոխությունը և Հունաստանի անկախությունը հայ իրականության մեջ:

Այն փաստը, որ հույն հեղափոխական-դեմոկրատ Ռիդասի սահմանադրության մեջ, «Ռազմական հիմնում» խոսվում է նաև հայերի մասին, մի բան, որ հայտնի դարձավ միայն վերջերս, վկայում է, որ վերոհիշյալ հարցադրումն անհիմն չէ: Շարունակելով առաջին «Հետեւողական» հիմնադրի՝ Ռիդասի գործը «Ֆիլիկի հետեւողական» ղեկավարները, բնականաբար, տեղ պետք է հատկացնեին նաև հույների հետ և նրանց համահավասար օսմանյան լծի տակ տառապող հայերին: Տրամաբանական է ենթադրել, որ գաղութահայությունը լինի դա Հունաստանում, Ռուսաստանում թե թուրքիայում, մասնակցություն է ունեցել հետեւողական շարժմանը: Ծիշտ է, հեղափոխական կազմակերպության խստագույն կոնսպիրացիան դժվարացնում է այդ հարցի պարզաբանումը. բայց պետք է ենթադրել, որ բուլղարների, սերբերի, սլավոնների կողքին հետեւողական շարժման մեջ իրենց տեղն են գրավել նաև մեր ժողովրդի ներկայացուցիչները:

Պարզվում է, որ այդ կարևոր հանգամանքը հաստատող որոշ կոնկրետ փաստեր հույն պատմաբաններին վաղուց են հայտնի: Դեռևս 1909 թ. Օդեսայում հրատարակվել է հույն հրապարակախոս Ս. Սակելարիոսի «Φιλική Ήρωική» փաստաթղթերի ժողովածուն, որը թերություններով հանդերձ, այսօր էլ չի կորցրել իր արժեքը: Այդ ժողովածուում բերվող վավերագրերից մեկը (էջ 187) վկայում է, որ Իզմաիլի հայ բեռնակիրները իրենց ավագի՝ Խամալ բեյի ղյխավորությամբ եղել են «Ֆիլիկի հետեւողական»

անդամներ⁴: Ս. Սակելարիոսի ժողովածուն հիմնականում ընդգրկում է հունական հեղափոխությունը սկսվուց հետո հետեւողականների ծավալած գործունեությունը Օդեսայում: Այստեղից կարելի է ենթադրել, որ հայ բանվորները «Ֆիլիկի հետեւողական» մեջ են մտել 1821 թ. մարտ-ապրիլից հետո: Իսկ մինչ այդ, իսկ այլ քաղաքներում արդյոք շարժման մեջ չեն ներգրավվել մեր ժողովրդի ներկայացուցիչները կամ առանձին գործիչներ: Թվում է թե խորապնդին պրպրտումներն ապարդյուն չեն անցնի:

Վերջերս ի հայտ բերված ու յույս ընծայված վավերագրերը հաստատում են, որ հունական դեպքերն իրոք մեծ հետաքրքրություն են առաջացրել հայկական շրջաններում: Խոսքը վերաբերում է Բեսարաբիայի հայոց պատրիարք Գրիգոր Զաքարյանի նամակներին, որոնք հրատարակել է պատմաբան Ս. Քուլանջյանը⁵: Պատրիարք Զաքարյանն ականատես է եղել հունական ապստամբության սկզբնավորմանը, լավատեղյակ է նրա ընթացքին: Կատարվող իրադարձությունները նա համարում է նշանակալից ու սքանչելի և ամենայն մանրամասնությամբ վերարտադրում է դրանք, պատմում հույների ռազմական գործողությունների և թուրքերի ձեռնարկումների մասին, խոսում է Թեոդոր Վլադիմիրեսկուի և Ալեքսանդր Իսսիլանտիի մասին, անդրադառնում Քիշինևում, Գալացում, Յաշում, Ինչպես և այլ տեղերում ծավալված ապստամբական շարժումներին:

Այդ նամակներն առհասարակ հետաքրքրական տեղեկություններ են պարունակում հունական շարժումների և Բալկանյան երկրներում 1821 թ. մարտ-հուլիս ամիսներին ծավալված իրադարձությունների մասին: Դրանք միաժամանակ ցույց են տալիս, որ Բեսարաբիայի հայոց պատրիարքն իր հերթին, նրա միջոցով նաև ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմ 1-ը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին, իշխան Հովհակիմ Լազարեն իրենց հերթին մեծ հետաքրքրություն են հանդես բերել 1821 թ. մարտի 5-ին հույների սկսած ապստամբության, դեպքերի հետագա զարգացման, տեղի ունեցող նշանակալից իրադարձությունների նկատմամբ: Ռուսահայոց հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Գառնակերյանը, որին հասցեագրված են նամակները, Գր. Զաքարյանի հաղորդած տեղեկությունները համարում է «նորասերան», իսկ տեղի ունեցող

⁴ Այս փաստը մեզ հաղորդել է գրախոսվող աշխատության հեղինակը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

⁵ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 3, էջ 122—140:

ղեկավարը՝ «մեծագործ սկսականությունը ներկա ժամանակին»։ Ներսես Աղտարակեցին, որ մամուլից լավ դիտեր թե ինչ տառապանքների են ենթարկվում հույները Կ. Պոլսում, նույնպես նամակներ է հղում կաթողիկոսին, տեղեկություններ հաղորդում Իսպիլանտիի ապստամբական զորքի մասին։ Հ. Լազարերը պաշտոնական աղբյուրներից և ողուական միջավայրից հայտնի դարձած լուրերից բացի տեղեկանում էր Ռուսաստանի հայոց արքեպիսկոպոսից, որ կապ ուներ Գր. Զաքարյանի հետ։

Այդ հետաքրքրության պատճառն, անշուշտ, լուր ալն չէր, որ հունական ղեկավարը ժամանակի խոշոր իրադարձություններ էին և հուզել էին ողուական իրականությունը։ Հայոց հոգևոր պետերը թեմական առաջնորդներից սկսած մինչև թերևս կաթողիկոսը, նշանավոր հայ գործիչները, ներառյալ նաև տարբեր գաղթօջախների նշանավոր անձնավորությունները, նրանք, որոնց խորթ չէին ազատագրական գաղափարները, որոշակի հույսեր էին կապում հույների ապստամբության, նրանց ներառյալ ազատագրության հետ՝ ակնկալելով Ռուսաստանի աջակցությունը թուրքական լծի տակ հեծող քրիստոնյա աղբյուրին։ Հույս ունենալով, որ քրիստոնյաների շրջանում տեղի ունեցող ալեկոծությունները ձեռնարկ են կայսրին՝ Ալեքսանդր I-ին, Գր. Զաքարյանը գուշակում է հնարավոր պատերազմը Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Դրա հետ էր կապվում նաև հայերի ազատագրության հույսը։

Կարելի է բերել նաև այլ փաստեր, որոնք ցույց են տալիս հունական ղեկավարի անմիջական հետևանքները հայկական իրականության մեջ։ Հայտնի է, թե ինչ կասկածանքներ հարուցեցին Սուրբ Կիրակոս կաթողիկոսի շինարարական աշխատանքները Կիլիկիայում։ Ինչպես երեվում է մի վկայությունից, 1825 թ., հունական ազատագրական պատերազմի ժամանակ, Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի համար կառույցվող երկհարկանի, քարակիր շենքի շինարարությունը թուրքական իշխանությունները դադարեցնել են տվել։ «Ժիշտ հելլենական ապստամբության միջոցին», — վկայում է Թ. Ծերմակյանը, — տեղական կառավարությունը այն կարծիքը կունենա կամ կձևացնե թե հայերն ալ ապստամբության կպատրաստվին և անոր համար ամրոցանման շենք մը կկառուցեն։ Ուստի անմիջապես վարժարանին շինությունը կարգելվի, բոլոր ազգապետները կբանտարկվեն...»⁶։

Կարևոր է նաև այն հարցը, թե հունական հեղափոխական շարժումը ինչ արձագանք է դրել հայ իրականության մեջ։ Առայժմ մեզ հայտնի է, որ հայ մամուլի էջերում քիչ չի նշվել հույ-

ների օրինակը, հաճախ ուղղակի մատնացույց է արվել անկախություն նվաճած Հունաստանը։

Կալկաթայում լույս տեսնող «Շտեմարան» պարբերականը հունական հեղափոխության բուռն օրերին, վերարտադրելով Հունաստանում տեղի ունեցող իրադարձությունները, դեռ 1822 թ. բազմիմաստ նկատել է. «Ազգն հայոց ակն ունենալի է ըստ օրինակի յունաց ընթանալս։ Շարունակելով իր միտքը, «Շտեմարանի» հեղինակը, այնուհետև, նկատում է, որ եթե հայերը ցրված չլինեին աշխարհով մեկ, եթե հայրենասիրության մեջ լինեին տոգորված հայ երիտասարդները, եթե նրանք «լինելին կիրթ և ի յուսմունս քաղաքական և դինոտրական յայնժամ պարտէաք ակն ունիլ թոթափման լծոյ»։ «Յունաստան ակն ունելի է ազատել ի բունութենէ օսմանեան, եթէ տէր յաճեսցէ», — այնուհետև գրում է «Շտեմարանը» և Հունաստանի ազատագրության հետ կապում նաև Հայաստանի ազատագրությունը, անհրաժեշտ է համարում, որ ձայն բարձրացվի, որպեսզի միավորված թագավորությունները «իրաւունք ունենան օգնելոյ հարկին որպէս յունաց համար ջանամանան մեզ համար ևս կջանան»։

1859 թ. Ստ. Ոսկանյանի «Արեւմուտքը» տպագրելով հունական ազատագրական պայքարի հերոսներից մեկին՝ Փոթոս Ցավելասին նվիրված պատմավեպագրական ակնարկը՝ «նոր Հունաստանի դյուցազունները» խորագրի տակ, գրել է. «Այս վերնագիրը կարդալուն ո՞ր հայ, որուն երականերուն մեջ Հայկա արյունը կեռալ, իսկույն պիտի չի հուզի, ո՞ր հայուն ոգին տխուր ամպով մը պիտի չի պատի տեսնելով, որ ան Հունաստանը, որ ատենոք մեր գեղեցիկ Հայաստանին դժբախտ վիճակին վիճակակից էր, անոր պես կուլար, կհեծեր, ան Հունաստանը հիմա նոր կկոչվի, անոր դյուցազունները եվրոպական ազգերուն պատմության առարկա կըլլան, եվրոպական լեզուներով կգովվին, կհռչակվին, երբ մեր Հայաստանին վրա դեռ նույն հին քողը ծածկված է, մեր Հայաստանը դեռ մոխրի վրա նստած կողբալ և ևստված չընե որ մենք հունաց երջանկությանը վրա շուրախանանք, յուրաքանչյուր աղագաց երջանկությունը ընդհանուր մարդկության երջանկությունն է, ինչպես ազգի մը յուրաքանչյուր անհատին բարօրությունը բոլոր ազգին բարեբախտությունն է։ Հայու սրտին տըխրություն տվողը ան պիտի ըլլա, որ Հայաստան դեռ նոր չի կոչվիր, հին Վարդաններուն, Վահաններուն հաջորդող, նոր դյուցազունը հասնելու կուշանան... Գիտնալով որ աղագաց ամենևն իմաստուն խրատատուն, ամենևն հանճարեղ, ամենևն եռանդուն դասատուն պատմությունն է, կփութանք աս նոր դյուցազուններուն պատմությունը»։

6 «Աշխատանք», 1912, № 160։

7 «Շտեմարան», 1822, էջ 529, 773։

ներ մեր հեռավոր ու միշտ սիրական հայրենակցաց հաղորդել, խորհրդածությունները յուրաքանչյուրոց իրենց սրտին ղգացմանցը թող տալով, վասնզի ամենին շահավետ խորհրդածությունը ամենուն սրտեն ինքիքեն հառաջ եկողն է»⁸։

Պարբերականի վերաբերմունքը, նրա խրմբադրի նախարանի թափանցիկ տողերը որևէ կասկածի տեղիք չեն տալիս, որ նրանք հետապնդում էին Հունաստանի օրինակով նոր Հայաստանի վերածնության նպատակը։ Սա հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության մի կարևոր ելակետ է, որ իշխող էր թե՛ «Արևմուտքից» առաջ, և թե՛ նրանից հետո։

Տարիներ հետո հանդես դալով «Փորձ» ամսագրում, Ստ. Պալասանյանը վերաշարադրելով Հունաստանի ազատագրության պայքարի պատմությունը, նշել է. «Ոչինչ այնպես հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել, որքան ներկա գարու ընթացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գործ դրած հերոսական ջանքերը՝ քաղաքական անկախություն ձեռք բերելու համար»⁹։ Ղեկավարվելով նույն միտումներով, ինչ «Շտեմարանն» ու «Արևմուտքը», «Փորձը» մանրամասն պատմում է Հունաստանի անկախության համար ծավալված հեղափոխական շարժումների և պատերազմական գործողությունների մասին, միաժամանակ թարգմանելով և «Հույների պատերազմական երգերը» խորագրի տակ տեղավորելով Ռիզասի «Ռազմական հիմն» մարտակոչը¹⁰։

Հույների օրինակով ազատագրական պայքար ծավալելու գաղափարն ավելի շեշտվածությամբ է դրսևորվել գերմանացի պատմաբան Կ. Մենդելսոն-Բարթոլդիի «Հունաստանի պատմություն» աշխատության թարգմանության ժամանակ՝ արդեն 1906 թ.։

Բարթոլդիի բազմահատոր աշխատությունից թարգմանիչ Ստ. Կանայանցը նույն միտումով ընտրել, թարգմանել և հրատարակել է միայն այն մասը, որ նվիրված է Հունաստանի անկախությանը և որտեղ մասնավորապես տրվում է «Ֆիլիկի հետերիայի» գործունեությունը։ Թարգմանիչն իր «Հառաջաբանում», որի տակ ստորագրել է «Հայ-Արմեն» ծածկանունով, չի թաքցր-

ել իր որոշակի նպատակը։ Նա գրել է, որ հայոց ազգի ազատագրությունը նպատակ դարձրած կազմակերպությունները և զանազան հրատարակությունները դեռևս չեն տվել «երբեմն թուրքերի բռնության տակ հեծող, իսկ այժմ ազատված հույն, սերբ և բուլղար ժողովուրդների ազատության պատճառաբանական մի պատմություն»։ Պարզաբանելով իր միտումը, «Հայ-Արմեն»-Կանայանցը շարունակում է. «Մեր նպատակի և ձգտումների համար օգտակար կլինեն համեմատել մեր և նոցա հանգամանքները, ժամանակն ու միջոցները և ուրիշների փորձառություններից օգտվել։ Բավական չէ միայն ոգևորությունը, պետք է հեղեղ դարձած հոսանքին ուղղություն և կարևոր ընթացք տալ»։ Եվ այդ «հանգամանքները, ժամանակն ու միջոցները» ցույց տալու, ազատագրական շարժման «ուղղությունը և կարևոր ընթացքը» պարզաբանելու համար թարգմանիչն այլ միջոցներ չունենալով, դիմել է Բարթոլդիի գրքի հատուկ ընտրված մասի թարգմանությանը, որովհետև համոզված է, թե «ավելի համոզվելու և ազդու է դրսի ձայնը և օտարի խոսքը»¹¹։

Հունական ազգային-ազատագրական պայքարն ընդօրինակելու, հույներին ուղղակի հետեւելու մտայնությունը հետաքրքրական դրսևորում է գտել Պ. Նորատունկյանի հայտնի նամակում, որը հավանաբար գրվել է 1863 թ. հոկտեմբերի 21-ին և ուղղված է Խրիմյանին։ Պ. Նորատունկյանը գրում է. «Երբ ուրիշ ազգեր ազատությունն են ձեռք անցուցին, գրեթե միշտ հետևյալ կերպովն հաղթանակեցին. երեք ճշմարիտ ազգասեր դուխ գլխո տալով, դավաճան անունն ընդունելով, ընկերներ ավելցնելով, զանազան միջոցներով դրամ հավաքելով, իրենց քաղաքականությունը համեմատ գրություններ հրատարակելով, օտար ազգաց համակրությունը գրավելով, տերությանց հավանությունը ստանալով և այլն, և այլն, տասը, քսան, վաթսուն տարիներ անդադար հաջորդաբար աշխատելով, առանց վհատության խոհեմությամբ և ասանկով նպատակնուն հասան»¹²։ Թվում է, թե չի կարելի տարակուսել, որ նամակի հեղինակը նկատի ունի հունական հեղափոխական կազմակերպության՝ «Ֆիլիկի հետերիայի», երեք հիմնադիրների օրինակը¹³։

8 «Արևմուտք», Փարիզ, 1859, № 23, էջ 177։

9 Տե՛ս «Փորձ», 1877/78, № 2-ում տպագրված «Հունաստանի անկախությունը» պատմական ընդարձակ ակնարկը, էջ 163։

10 Այլ աղբյուրների հետևությամբ «Փորձի» թարգմանիչ Դ. Բարխուդարյանը Ռիզասի հիմնը վերագրել է Ա. Կորախսին։ Այդ մասին տե՛ս մեր նշված հոդվածը։

11 Կ ա ու լ Մ ե ն տ ե լ ս զ ո չ ն Բ ա ռ թ ո լ դ ի, Պատմություն Հունաստանի... գիրք 2, մաս 1, Վաղարշապատ, 1906, «Հառաջաբան», էջ Ե—Զ։

12 «Դիվան հայոց պատմության», Թիֆլիս, 1915, գ. ԺԳ, էջ 57։

13 Պ. Նորատունկյանի նամակի որոշ կողմերը, մեր կարծիքով, ճիշտ մեկնաբանում չեն

Հետաքրքրական հետևությունների է բերում «Ֆիլիկի հետերիայի» կազմակերպական սկզբունքների և նրա անդամների գործունեության մեթոդների զուգադրումը Կարինի (էրզրում) «Պաշտպան հայրենյացի» (1881—1882) ստեղծման մեթոդների ու գործելակերպի հետ: Այդ գաղտնի կազմակերպությունը, ինչպես և «Ֆիլիկի հետերիան» ստեղծվել է (երեք հոգու նախաձեռնությամբ) նրա մեջ անդամների անհատական հավաքագրման մեթոդով, հատուկ երաշխավորությամբ, նրա գործունեությունը ղեկավարում էր հատուկ կոմիտեն, անդամները (մեծամասնությամբ ցածր դասից) իրար հետ կապ էին պահպանում օղակային սխեմայով, նրանք դրամական միջոցներ էին ժողովում (անդամագրվողների նվիրատվությամբ, իսկ ունեորներից բաժանորդագրությամբ, ահաբեկմամբ և գրավոր սպառնալիքով), նույնպես ունեին հատուկ խորհրդանիշ և տարբերանշաններ, որոնց օգնությամբ ճանաչում էին միմյանց: Գաղտնի կազմակերպության անդամները երդում էին տալիս, ստանում էին անդամատոմսեր, սկզբունքով ընդունում էին տեղորի մեթոդը: Կազմակերպությունն աստիճանաբար վեր էր ածվում ռազմական զորամիավորման, ստեղծվել էր զինապահեստ: «Պաշտպան հայրենյացի» քաղաքական ծրագիրը (մինիմում և մաքսիմում) հանգում էր ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը, ապա և Հայաստանի անկախության հաստատմանը¹⁴:

«Պաշտպան հայրենյացի» հայտնաբերված հրահանգը դարձյալ ցույց է տալիս, որ նրա գործունեության հիմքում դրված առանձին ըսկզբունքներ ընդհանրություն ունեն հունական

դտել մեր պատմագիտության մեջ: Մասնավորապես այն կարծիքն է հայտնվել, թե նամակում նկատի է առնված լեհերի օրինակը, մինչդեռ խոսքն այն ազգերի մասին է, որոնք «ազատությունն են անցուցին», իսկ դա մասնավորապես կարող է վերաբերել հույներին (տե՛ս Ա. Գ. Հոփհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 558—559 և Հ. Ղալարյան, Արևմտահայերի սոցիալ-քաղաքական կացությունը 1800—1870 թթ., 1967, էջ 514—517 և այլն):

¹⁴ Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 182—199 և 472—482: Ռ. Փ. Հոփհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյացի» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 282—376: Հմմտ.՝ նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ց. 2, գ. 44, թ. 1—20:

գաղտնի կազմակերպության կազմակերպական սկզբունքների հետ: Բնորոշ են այն սկզբնատողերը, որով հրահանգ-կոչը դիմում է հայությանը. «Հայե՛ր, ժամանակն է արթնանալ, բավական է ննջել: Նայեցեք հույների և սերբերի սրխազործություններին և նրանցից օրինակ վերցրե՛ր: Այդ ժողովուրդները, շնայած իրենց փոքրաթիվ լինելուն, ուժով, անվերջ տանջանքներով, զենքի ուժով վերականգնել են իրենց թագերը...»¹⁵: Այս հրահանգի կետերից մեկն, օրինակ, կարծես բառացի արտացոլում է այն կարգը, որ սահմանված էր «Ֆիլիկի հետերիայի» անդամների համար. «Խմբակին պատկանող անձինք,— ազդարարում է հրահանգի 23-րդ կետը,— ունեն հատուկ նշաններ: Այդ անձինք կարող են տեսնվել միմյանց հետ առանց ծանոթ լինելու» և ապա. «Ընկերության ղեկավարներին ու անդամներին կարելի է ճանաչել ամեն մի ժողովում՝ իրենց նշաններով»:

«Ֆիլիկի հետերիայի» կազմակերպական հիմունքները «Պաշտպան հայրենյացի» ստեղծման և գործունեության ընթացքում կիրառելու մասին մեր ենթադրությունը այստեղ արվում է ավելի շատ հարցադրման կարգով: Հարկավոր է հիշել, որ դեկաբրիստական առանձին կազմակերպություններ, ինչպես դա նշում է գրախոսվող աշխատության հեղինակը, իրենց գործունեության մեջ ձգտել են օգտագործել հետերականների կիրառած սկզբունքները: Իրենց հերթին «Ֆիլիկի հետերիայի» ստեղծողները ընդհատակյա կազմակերպության սկզբունքները հայտնի չափով որդեգրել են նմանօրինակ այլ կազմակերպություններից, մասոնական կազմակերպությունների փորձից, Ռիգասի «Հետերիայի» պրակտիկայից:

Անկախ հետագա ուսումնասիրությունների արդյունքներից, թվում է սխալված չենք լինի, եթե եզրակացնենք, որ հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության մեջ Հունաստանի անկախության օրինակը, հունական հեղափոխական «Ֆիլիկի հետերիա» գաղտնի կազմակերպության ձավալած ազատագրական շարժումը որոշակի տեղ ու դեր է ունեցել: Այս առումով օսմանյան լծի տակ ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետ հայ ազգային-ազատագրական շարժումների ունեցած առնչությունների ուսումնասիրությունը կարևոր խնդիր է դառնում: Գ. Լ. Արշի ժՀետերական շարժումն Ռուսաստանում» գիրքը որոշ չափով օգնում է նաև այդ հարցի ուսումնասիրության դործին:

Մ. ՀԱՆՈՐՅԱՆ

¹⁵ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ց. 2, գ. 44, թ. 1—20: